



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակն իր թիմը համալրելու նպատակով հայտարարում է մրցույթ՝ **Պահանջները քննող մասնագետի** թափուր պաշտոնի համար: Ստորև ներկայացվում են աշխատանքի պայմանները և աշխատակցին ներկայացվող պահանջները:

Ստորաբաժանման անվանումը	Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ, պահանջներն ընդունող և քննող խումբ
Աշխատատեղի անվանումը	Պահանջները քննող մասնագետ
Աշխատանքի սկիզբը	Անմիջապես, երեք ամիս փորձաշրջանով
Աշխատանքային օրերը և ժամերը	Երկուշաբթիից ուրբաթ, 09:00-18:00
Հիմնական պարտականությունները	<ul style="list-style-type: none"> <li>• Իրականացնել հաճախորդների ներկայացրած պահանջների քննությունը, մասնավորապես՝ ուսումնասիրել գործը, համադրել ապացույցները, վերլուծել, բանակցել կողմերի հետ, կազմել Հաշտարարի որոշման նախագծերը,</li> <li>• Մասնակցել այլ մասնագետների կողմից իրականացվող պահանջների քննությանը՝ տրամադրելով իրավական աջակցություն,</li> <li>• Մշակել Հաշտարարի գրասենյակի ներքին իրավական ակտերը, համակարգել դրանք,</li> <li>• Օժանդակել Գրասենյակի դատական գործերով հայցադիմումների, պատասխանների պատրաստման գործընթացին, մասնակցել դատական նիստերին՝ ներկայացնելով հաշտարարի գրասենյակի շահերը,</li> <li>• Իրականացնել իրավաբանական վերլուծություններ՝ առաջադրված թեմաների շրջանակում, տալ հատուկ իրավաբանական եզրակացություններ,</li> <li>• Ուսումնասիրել միջազգային փորձը՝ վեճերի լուծման արտադատական մեխանիզմների և ֆինանսական սպառողների շահերի պաշտպանության ոլորտներում՝ ներկայացնելով առաջարկություններ դրանց ներդրման վերաբերյալ</li> </ul>
Նվազագույն պահանջներ	<ul style="list-style-type: none"> <li>• Բարձրագույն իրավաբանական կրթություն,</li> <li>• Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ</li> </ul>

<p>Գիտելիքներ (քննազավառը, խորությունը)</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Բանկային գործ (խորացված),</li> <li>• Բանկային օրենսդրություն և նորմատիվային դաշտ (խորացված),</li> <li>• Քաղաքացիական օրենսդրություն (խորացված),</li> <li>• Քաղաքացիական իրավունք (խորացված),</li> <li>• Պայմանագրային և դելիկտային իրավունք (խորացված),</li> <li>• ՀՀ դատաիրավական համակարգ և ներպետական օրենսդրություն (խորացված),</li> <li>• Ապահովագրական գործ,</li> <li>• Ֆինանսաներ,</li> <li>• Իրավական գրագրության գերազանց իմացություն,</li> <li>• Անգլերենի և ռուսերենի իմացություն,</li> <li>• Հայերենի ազատ տիրապետում</li> </ul>
<p>Հմտություններ և անձնային հատկանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Համակարգչով աշխատելու հմտություն (MS Office),</li> <li>• Վերլուծելու ունակություն,</li> <li>• Ստեղծագործական մտածելակերպ,</li> <li>• Հաղորդակցվելու կարողություն,</li> <li>• Խորհրդատվական հմտություններ,</li> <li>• Սպասարկման հմտություն,</li> <li>• Առողջ դատելու ընդունակություն,</li> <li>• Համագործակցելու ունակություն,</li> <li>• Օրինապահություն և հուսալիություն,</li> <li>• Ֆիզուցիար պարտականության գիտակցում</li> </ul>

Նշված պահանջներին համապատասխանող անձինք կարող են իրենց ռեզյումեներն ուղարկել [info@fsm.am](mailto:info@fsm.am) էլեկտրոնային փոստի հասցեին՝ վերնագրի հատվածում նշելով Case Investigating Specialist կամ Պահանջները քննող մասնագետ: **Խնդրում ենք ռեզյումեներն ուղարկել միայն հայերեն: Այլ լեզուներով ուղարկված ռեզյումեները չեն դիտարկվելու:**

Դիմելու վերջնաժամկետը ս/թ ապրիլի 28-ն է: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 70 11 11 (ներքին՝ 23) Հասմիկ Մակարյանին կամ գրել մեզ [info@fsm.am](mailto:info@fsm.am) էլեկտրոնային փոստի հասցեով: